ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում ***26.08.2013թ.*** տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Ս.Սահակյան ՀՀ Արագածոտնի մարզպետ
Ն.Մովսիսյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Ա.Արսենյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Հ.Գևորգյան ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Ս.Միքայելյան ՀՀ ՏԿՆ ներկայացուցիչ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում 2013 թվականի առաջին կիսամյակում սեփական եկամուտների հավաքագրման և նախորդ տարիներին գոյացած աշխատավարձների և սոցվճարների պարտքերի մարման գործընթացի մասին/ զեկ. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ /:

2. Մարզի համայնքների զարգացման քառամյա ծրագրերի ընթացքի մասին / զեկ. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ /:

3. Հայաստանի ագրարային համալսարանի հեռակա ուսուցման 2013 թվականի նպատակային ընդունելության մասին /զեկ. գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱԶԱՏՅԱՆ/:

4. Համայնքներում առևտրային կազմակերպությունների հարկային պարտավորությունների կատարման գործընթացի մասին / զեկ. ՏԻՄ վարչության պետ Ս. Հովսեփյան /:

5. Համայնքներում հողի հարկի և գույքահարկի գծով պարտքեր ունեցող բացակա քաղաքացիների, ինչպես նաև տիրազուրկ գույքի նկատմամբ առկա հարկային պարտավորությունների մասին / զեկ. ՏԻՄ վարչության պետ Ս. Հովսեփյան /:

6. Այլ հարցեր և հայտարարություններ:

7. Կից զեկուցողների զեկուցագրերը:

Մինչ օրակարգային հարցերի քննարմանն անցնելը, մարզպետ Սարգիս Սահակյանը տեղեկացրեց Ձորագլխի համայնքապետ Խաչիկ Հովհաննիսյանի մահվան մասին: Նրա առաջարկով մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին հանգուցյալի հիշատակը: Մարզպետը նաեւ համայնքապետերին ներկայացրեց նորանշանակ փոխմարզպետ Նունե Մովսիսյանին: Այնուհետեւ Հայաստանի պետական ագրարային համալսարանի պրոռեկտոր Սմբատ Դավեյանը տեղեկատվություն հաղորդեց իրենց ուսումնական հաստատության, ընդունելության կարգի եւ պայմանների մասին:

Օրակարգային առաջին հարցով մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն.Գալստայնը խոսեց համայնքներում 2013 թվականի առաջին կիսամյակում սեփական եկամուտների հավաքագրման եւ նախորդ տարիներին գոյացած աշխատավարձների եւ սոցվճարների պարտքերի մարման գործընթացի մասին: Անդրադառնալով ինչպես այս, այնպես էլ ֆինվարչության պետի կողմից ներկայացված աշխատավարձների եւ սոցվճարների պարտքերի մարմանը, մարզպետն ասաց, որ սրանք համայնքներում առկա կարեւորագույն հիմնախնդիրներից են, ուստի ներկայացվող ընդհանուր թվերից զատ անհրաժեշտ է մանրակրկիտ ուսումնասիրություններ կատարել յուրաքանչյուր համայնքում՝ բացահայտելով առանձնապես ցածր ցուցանիշեր արձանագրած համայնքներում իրավիճակի պատճառներն ու դրանց վերացման ուղիները: Նա վերստին հանձնարարեց մարզպետարանի վարչությունների պետերին՝ իրենց ամրացված համայնքներում հետեւողական աշխատանք տանել սեփական եկամուտների հավաքագրումներն առավելագույն իրականացնելու համար:

Մարզխորհրդի նիստի մասնակիցների հետ քննարկվեցին նաեւ օրակարգային մյուս հարցերը, որոնք վերաբերում էին համայնքների զարգացման քառամյա ծրագրերի ընթացքին, Հայաստանի ագրարային համալսարանի հեռակա ուսուցման 2013 թվականի նպատակային ընդունելությանը, առևտրային կազմակերպությունների հարկային պարտավորությունների կատարման գործընթացին, հողի հարկի և գույքահարկի գծով պարտքեր ունեցող բացակա քաղաքացիների, ինչպես նաև տիրազուրկ գույքի նկատմամբ առկա հարկային պարտավորություններին:

Ամփոփելով նշված հարցերի քննարկումը, մարզպետն անդրադարձավ նաեւ ՀՀ կառավարության կողմից իրականացվող առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման հրատապ 4-րդ ծրագրին, համայնքներին տրամադրվող գյուղատնտեսական տեխնիկայի, ազոտական պարարտանյութի եւ դիզելային վառելիքի հատկացման, մկնանման կրծողների դեմ պայքարի գործընթացներին, առաջիկայում՝ սեպտեմբեր ամսին իրականացվելիք մշակութային խոշոր միջոցառումների նախապատրաստությանը եւ այլ հարցերի:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. Ազատյանին

--- Համակարգել Բյուրական և Ավան թաղերով սնուցվող համայնքներին ոռոգման ջրով ապահովելու գործընթացը և հետևել որպեսզի Ամբերդ ՀԷԿ-ի գործունեությունը չխոչնդոտի ազգաբնակչության ջրամատակարարումը:

--- Մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով մարզին մկնասպան թունանյութ տրամադրելու գործընթացը կազմակերպելու վերաբերյալ:
/Ժամկետ 1 շաբաթ /

--- Ներկայացնել տեղեկատվություն պարարտանյութի և դիզելային վառելիքի պահանջարկի վերաբերյալ:

--- Գյուղատնտեսության ոլորտի հաշվառման գործընթացը համակարգելու վերաբերյալ:

2. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. Գալստյանին

--- Աշխատավարձերի և սոցվճարների պարտքերի մարման գործընթացը կազմակերպելու վերաբերյալ:

3. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն.Գալստյանին և զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Պ.Նազարյանին

--- Ներկայացնել մարզի համայնքների զարգացման ծրագրերը և դրանց համապատասխանելիությունը համայնքների բյուջեներին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ***Փոքր և միջին բիզնեսի զարգացման կենտրոնի Արագածոտնի մասնաճյուղի ներկայացուցիչ Ա. Մակարյան***

--- Գյուղատնտեսական տեխնիկաների ձեռքբերման վերաբերյալ:

2. ***Քաղաքաշինության վարչության պետ Ա.Դավայան***

--- ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում <<Հողարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին>> ՀՀ օրենքի կետերի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից լիազորությունների վերաբերյալ:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ